ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

0054 ք.Երևան, Փիրումյանների 9

justice.edu.am@gmail.com

№ 088/գ-2016թ.

<<06>> <<04>> 2016թ.

<<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի պետ
պարոն Միհր Անանյանին

Հարգելի պարոն Անանյան,

Ի կատարումն ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 116-րդ կետի պահանջների, կից ներկայացնում ենք գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և տեղեկացնում, որ 31.03.2016թ. <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր:

Արդարադատության ակադեմիայի
ռեկտոր **Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ**

Արձանագրություն N 7

<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ-ի 2016թ. կարիքների բավարարման համար <<ԱԱ-ՊԸԾՁԲ-16/01>> ծածկագրով պարզեցված ընթացակարգով <<Պահնորդական>> ծառայության գնման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30/03/2016թ. ժամը 14^{00}-ին, ք. Երևանում, Փիրումյանների 9 հասցեում, <<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ-ի շենքում, խորհրդակցությունների սենյակում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է. Ամիրխանյանը, անդամներ՝ Է. Արիստակեսյանը, Մ. Համբարձումյանը և քարտուղար Ս. Ծատինյանը:

Օրակարգ

գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշման և արդյունքների ամփոփման մասին

Գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշման մասին.

Ընդունել ի գիտություն, որ <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի կողմից 10.03.2016թ. թիվ ՊՍ-ԳԱԿ/3 գրությամբ <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ ներկայացված բողոքը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 29.03.2016թ. թիվ 23/16 որոշմամբ բավարարվել է:

Չնայած այն հանգամանքին, որ գնահատող հանձնաժողովը համաձայն չէ գնումների բողոքարկման խորհրդի վերոնշյալ որոշման հետ, այնուամենայնիվ, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը, ինչպես նաև 48-րդ հոդվածի 5-րդ մասը, դատական կարգով նշված որոշման բողոքարկման դեպքում դատարանում գործի քննության ժամկետների տևողությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ որոշման իրավաչափության ստուգման դատական վարույթի ընթացքում <<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ-ը զրկված կլինի պահնորդական ծառայություն պատվիրելու հնարավորությունից,

գնահատող հանձնաժողովը որոշեց

1/ ընտրված մասնակից ճանաչել <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ին և ամփոփել արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ամփոփման արդյունքները
1	<<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ	բավարար
2	<<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ	բավարար
3	<<Ֆիլյոր>> ՍՊԸ	բավարար
4	<<ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ>> ՍՊԸ	բավարար
5	<<Լեգիոն Ե.Ս.Է.>> ՍՊԸ	անբավարար

2/ գնումների մասին << օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով նախատեսված կարգով հաստատել <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը,

3/ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 10^{00}-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0:

Հանձնաժողովի՝

նախագահ Է. Ամիրխանյան

անդամներ Է. Արիստակեսյան

Մ. Համբարձումյան

քարտուղար Ս. Ծատինյան